10) Գլխաւոր վարչութիւնն ունի իր կնիքը, իսկ տեղական վարչութիւններին ուղարկում է թէ կնիքի օրինակները, թէ հաշուական մատեանները:

11) Եթէ տեղական ճիւղը դադարեցնում է իր գործունէութիւնը, իր բոլոր գործերը, շարժական և անշարժ կայքը անցնում է գլխաւոր վարչութեան: Այդ բոլորը կրկին յետ է տրւում նոյն ճիւղին, եթէ վերջինս իր դադարման օրից երկու տարւայ ընթացքում վերսկսում է իր գործունէութիւնը: Հակառակ դէպքում նրա բոլոր կայքն ու դրամագլուխը մնում է գլխաւոր վարչութեան:

12) Գլխաւոր և տեղական վարչութիւնների գումարները բաժանւում են 4 կարգի. — ա) ծախսերի գումար՝ Ընկերութեան ընթացիկ ծախսերի համար, բ) պահեստի դրամագլուխ, պատերազմի պէտքերի համար, գ) հաշմանդամ զինուորականներին նպաստի դրամագլուխ, դ) յատուկ նպատակների համար հաւաքւած կամ նուիրաբերած գումարներ: Վերջին կարգի գումարների շարքին են պատկանում դիութեան քոյրերի կենսաթոշակի համար յատկացւած գումարները:

Ծանօթ. Յատուկ նպատակների համար նուիրաբերած գումարները գործադրւում են նուիրողի կամքի համաձայն:

13) Գլխաւոր և տեղական վարչութիւնների գումարները պահւում են պետական գանձարանում, կամ նրա մի որեւէ բաժանմունքում՝ ցպահանջ կամ ընթացիկ հաշուով:

Ընկերութեան և իր հիմնարկութիւններին պատկանող բոլոր դրամագլուխները հնարաւորութեան առաջին դէպքում, վերածւում են պետական տոկոսաբեր թղթերի և պահւում պետական բանկում կամ նրա բաժանմունքներից մէկում: Եթէ մօտակայ տեղերում այդ բաժանմունքը չկայ, կամ որևէ դժւարութիւն կայ յիշեալ դրամագլուխները նրան յանձնելու, դրանք տրւում են գլխաւոր վարչութեան, որ և այդ գումարները պետական արժէթղթերի է վերածում և պահ տալիս պետական բանկին:

14) Տեղական վարչութիւնները բոլոր տեսակի դրամական եկամուտների 25%-ը, բացառութեամբ յատուկ նպատակի համար եղած նէրների, ուղարկում են գլխաւոր վարչութեան, Ընկերութեան ընդհանուր ծախսերի համար, մնացած 75%-ից հանւում է վարչութեան տարեկան ծախսերը, իսկ մնացած գումարը, որի մէջ մտնում է նաև նախահաշուի մնացորդը, բաժանւում է չորս հաւասար մասերի, երկու մասը յատկացւում է պահեստի դրամագլխին պատերազմի պէտքերի համար, մի մասը՝ հաշմանդամ զինուորականների նպաստի դրամագլխին և մի մասը՝ ընդհանուր աղէտներից վնասւածների օգտին:

15) Ընդհանուր ժողովի դրաղմունքներն են.

ա) Հաստատել ընկերութեան, գլխաւոր վարչութեան և տեղական վարչութիւնների համար կանոնադրութիւն:

բ) Քննել գլխաւոր վարչութեան ընդհանուր հաշուետուութիւնը Ընկերութեան գործունէութեան և միջոցների մասին:

գ) Ստուգել գլխաւոր վարչութեան ելքի ու մուտքի գումարները և նրա հսկողութեան տակ գտնւած դրամագլուխները.